1893 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3 (15) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեայն օր 10—1 ժամ (բացի կիրակի-և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ
1894 ԹՈՒԻՆ
(ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակուի այժմեան գիրքով և նոյն ծրագրով: Թերթը ստանում է «Հիւսիսային գործակալութեան» հեռագիրներ:

«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ. և մի ամսուանը—1 ռուբլի:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է գրեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція газеты «Ардзагангъ». իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien «Ardzagang».

Մեր այն հին բաժանորդներին, որոնք կըցանկան 1894 թուին ևս «Արձագանք» ստանալ, խնդրում ենք մինչև դեկտեմբերի 20-ը նորոգել իրանց բաժանորդագրութիւնը, որպէս զի միջոց ունենանք կարգադրելու, որ սկզբից իսկ համարները ցանկալի ճշտութեամբ ուղարկուեն:

Յայտարարութիւններ ընդունւում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով:

Եկող 1894 տարուան այժմէն իսկ ստորագրուող բաժանորդները տասը ռուբլի հատուցանելով «Արձագանքի» համարները կըստանան գրուելու օրից սկսած:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի մեծ թիւրիմացութիւն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Երևանի նահանգի շինական հաշտարար ատեանների գործավարութեան քննութիւն: Մահմեդական հոգևորականութեան պաշտպանութեան ծախքը: Ազատ թոշակների բաժանումը: Առաջին գիմնազիայի տարեկան հաշիւը: Պրիստաւ Աղ. Մելիք-Ադամալեանի դատը: Օրթոդոքս միսսիոնարական ընկերութեան տարեկան ընդհ. ժողովը: Հասարակական գինետներ: Նամակ Թէջինից: Նամակ Նովօչերկասկից: Յօգուտ ղալագեցոց հանգանակած դրամ: Ատրպատականի առաջնորդը: Մի ֆրանսիացի հեղինակ հայերիս մասին: Խոլերայով բռնուողներ Երևանի նահանգում: Մահմեդական ընթերցարան Բագուում: Ս. Էջմիածնից: Կանանց կրթութեան բարեփոխման ծրագիր: Երկաթուղու ընկերութեան մէջ ծառայող կանայք: Տիրացու և ոչ աբեղայ:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—Սամուէլ քահանայ Անեցի:

ՖԵԼԻԵՏՕՆ.—«Արձագանքի» թղթակիցը Ղալագէում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՄԵԾ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

Մի գրականական դժբաղդութիւն է, որ Թիֆլիզում հրատարակուող ռուսաց մի քանի թերթերի խմբագիրները կրօնով հայ են, հայ ազգանուններ են կրում:

Եւ ահա թէ ինչու:

Այս պատահական փաստը թելադրում է օտար հասարակութեանը կարծել թէ կարդալով այդ թերթերի մէջ լոյս տեսնող զանազան տեղեկութիւններ հայոց ներքին կեանքի երևոյթների վերաբերութեամբ, նա մի ճիշդ գաղափար է ստանում Կովկասում բնակուող ամենահին քաղաքակիրթ ազգի մասին: Այո, օտար ընթերցողը մինչև իսկ հակամէտ է կարծել, որ հաղորդած տեղեկութիւններն ազգասիրական գոյներով են ներկուած:

Կովկասի պարբերական գրականութեան հետևողներին աւելորդ է բացատրել թէ որ աստիճանի սխալ է օտարների այդ կարծիքը, թէ ինչ մեծ թիւրիմացութիւն տեղի ունի այս դէպքում:

Այս՝ անուամբ միայն հայ, խմբագիրները միանգամայն անտեղեակ մեր լեզուին, բոլորովին մեր գրականութիւնից, ազգիս պատմութեան մասին գաղափար ստացած հասարակոտր ռուսական աղբիւրներից, ոչ միայն չեն նպաստում հայոց ազգի մասին ճիշդ գաղափարներ տարածելուն, այլ սոցա թերթերը ընդհակառակն գայթակղեցուցիչ մոլորութիւնների մի ընդարձակ ասպարէզ են ներկայացնում:

Բացատրենք մեր ասածը մի քանի օրինակներով.

Դպրոցական կեանքը այդ թերթերի նիւթ է դառնում միայն այն դէպքում, երբ այս կամ այն ուսումնարանում պատահում է մի որև է ներքին գժտութիւն, մի որև է խայտառակութիւն: Ի հարկէ նոյնանման և թերևս աւելի աչքի ընկնող ինցիդենտներ պատահում են և այլ ազգերի դպրոցական կեանքում, բայց բացառապէս հայ դպրոցների թոյլ կողմերի վրայ մատնանիշ անելով, այդ թերթերը օտար հասարակութեանը միանգամայն թիւր գաղափար են տալիս: Դոցա ընթերցողներն ակամայ այն տպաւորութիւնն են ստանում, որ մեր դպրոցական կեանքը—լոկ մի շարք տխուր պատկերներ ներկայացնելով—անընդունակ է ինքնուրոյն կերպով զարգանալու:

Մեր եկեղեցական կեանքի նկատմամբ բաւական է յիշել թէ ինչ ձև էին տուել այդ թերթերը Խրիմեան Հայրիկի՝ աշխարհիս այս մեծ հռետորներից մէկի խորիմաստ, հրաշալի քարոզներին, թէ որքան խեղաթիւրած էին նորին Վեհափառութեան խօսքերը: Եւ օտար ընթերցողները տարակուսած էին մնացել—նոքա սկսեցին կասկածել թէ արդեօք Հայրիկն արժանի է այն հռչակին, որ վայելում է...

Հայ մամուլի վերաբերութեամբ՝ որ իր բոլոր պակասաւոր կողմերով հանդերձ, աւելի դրական նիւթ է մատակարարում, հայ թերթերի նկատմամբ՝ որոնց մեծագոյն մասը, թող ներուի մեզ այս յանդգնութիւնը, աւելի մեծ հմտութեամբ է խմբագրվում—ռուսաց այդ լրագիրների բռնած դիրքն ապացուցանում է նոցա ղեկավարների կատարեալ անձեռնհասութիւնը՝ օգտուել գէթ պատրաստի նիւթերից: «Երեք երեխայ ծնող կինը» կամ «յանկարծամահ եղած մշակը» և սոցա նման «ներքին լուրերը» կազմում են այդ թերթերի արած «քաղուածքների» համարեա թէ բացառիկ առարկան. և ահա նոցա ընթերցողները շատ ստոր գաղափար են ստանում մեր մամուլի ներքին արժէքի մասին:

Հազարից մի անգամ տեսնում ենք, որ այս կամ այն հայ թերթի լուրջ յօդուածը թարգմանուած է յիշեալ լրագիրներում, բայց այդ պատահական աշխատակցի գործ է. մինչդեռ մշտական՝ հազիւ րեպօրտերի անուան արժանի՝ աշխատակիցները. . . բայց սոցա մասին մի այլ անգամ:

Հայոց գեղեցիկ գրականութիւնը, որի նկատմամբ այդ թերթերը միջնորդ պէտք է հանդիսանային մեր և մայրաքաղաքի մամուլի մէջ, թարգմանելով հայ վիպասանների ընտիր երկերը, բոլորովին մոռացութեան է տուած: Թողած Պատկանեանների, Պռօշեանցների, Ծերենցների և այլոց ընտիր գրուածները, մեր յիշած թերթերից մէկը, օրինակ, մի ամբողջ տարի տալիս էր իր ընթերցողներին, ինչ էք կարծում ինչ—Րաֆֆիի ամենաթոյլ վէպի—«Ոսկէ աքաղաղի» ամենաանճիշդ թարգմանութիւնը: Միթէ այդ վէպը կարող էր մեր գեղարուեստական գրականութեան մասին ճիշդ գաղափար տալ:

Եւ ահա այսպէս մեր կեանքի որ կողմն էլ առնելու լինենք, այսպիսին անդրադարձրած է այդ թերթերի մէջ այն ձևով և բովանդակութեամբ, որ միանգամայն մոլորեցնում է ընթերցողներին իրերի իսկական դրութեան նկատմամբ, ամենաթիւր գաղափար է տալիս մեր ազգի մասին:

Թէ ինչ ծառայութիւն են մատուցանում այդ թերթերի հայազգի խմբագիրները Եւրոպային՝ բացադրելով Կապրիվիի և Գլադստոնի խորամանկ քաղաքականութիւնը, կամ ռուսաց հասարակութեանը՝ քննելով ռուս-գերմանական դաշնադրութեան տակաւին անյայտ կէտերը, տէրութեան վրայ ազդելու նպատակով,—այդ թողնում ենք դատել նոցա, որոնք գէթ մի շաբաթ հետևել են այդ թերթերին. բայց որ դոքա արջի ծառայութիւն են մատուցանում հայ հասարակութեան — դրան կասկած չկայ: Այս կէտի վերաբերութեամբ ոչ մեծ, ոչ փոքր թիւրիմացութիւն տեղի ունենալ կարող չէ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասի պ. կառավարչապետի խորհրդի անդամ գաղտնի խորհրդական Եակեմովը՝ կառավարչապետի դիւանատան թարգման պ. Ղորղանեանի հետ ուղևորուեցաւ Երևանի նահանգը շինական հաշտարար ատեանների գործավարութիւնը քննելու:

***

Պետական խորհուրդը շուտով պիտի քննէ պետական գանձարանից Անդրկովկասի մահմեդական հոգևորականութեան պաշտպանութեան համար արած ծախքը դադարեցնելու խնդիրը: Այդ ծախքը կառավարութիւնն սկսել է անել 1872 թուականից ժամանակաւորապէս, մինչև մահմեդական հոգևորականութեան կալուածների արդիւնքներն որոշելը:

***

Կովկասի պ. կառավարչապետի օգնական կոմս Տատիշչևը ազատ թոշակները բաժանել է հետևեալ անձանց. լեռնային ճեմարանի երկրորդ դասընթացքի ուսանող Վասիլիյ Ստեփանովին, Նեժինի պատմական-լեզուագիտական ճեմարանի ուսանող Պլատոն Աբուլաձէին և Լազարեան ճեմարանի թոշակաւոր են նշանակուած Թիֆլիզի 2-րդ գիմնազիոնի Բ. դաս. աշակերտ Խրիստափոր Ղուլինևին և Ը. դաս. աշակերտ Արչիլ Բաղոյևին:

***

Այս օրերս լոյս է տեսել տեղւոյս առաջին գիմնազիայի հաշիւը 1-ն սեպտեմբերի 1893 թուի, որից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները.

Ըստ ազգութեանց աշակերտները բաժանվում էին հետևեալ կերպով. ռուս—281, հայ—175, վրացի—108, թուրք—23, հրեայ—16 և այլ ազգութիւններին պատկանող 14 հոգի:

Ըստ ծագման՝ ազնուականների որդիք—508, քաղաքացիների—126, պատուաւոր քաղաքացու և 1-ն կարգի վաճառականների—22, մնացեալ դասակարգերի—21:

Յառաջադիմութեան կողմից ամենամեծ տոկոսիք տալիս են հրեաները (94%) ամենափոքրը՝ վրացիք (69%) և թուրքերը (67%). ռուսները (79%) և հայերը (77%) միջին տեղն են բռնում:

ՖԵԼԻԵՏՕՆ

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ԹՂԹԱԿԻՑԸ ՂԱԼԱԳԷՈՒՄ *)

II

Ղալագէ հասած օրուայ իրիկունից սկսած խումբ խումբ մարդիկ ինձ մօտ գալ: Հետաքրքիրները ցանկանում էին իմանալ, ինչ է իմ գալստեան պատճառը. շատ լաւ էի նկատում թէ ովքեր են հարցափորձ եկել, և ովքեր հարցայոյս: Թէ ինձ հիւրընկալող ծերունուն, որի աւագ որդին չորս վեաքիլներից մինն էր, և թէ գիւղի միւս համբաններին համառօտ կերպով յայտնելով, որ եկել եմ կարօտեալ հրկիզուածներին փող բաժանելու, խնդրեցի որ նրանք հրդեհի վերաբերեալ բոլոր մանրամասերն ինձ պատմեն: Պատմել տուի ծերի, չափահասի, պառաւի, գիւղականի, քահանայի, ուսուցչի, իւրաքանչիւրն իւր տեսածն ասեց: Կանչեցի ինձ մօտ վնասուածների, այրուածների տէրերին, առանձին առանձին պատմել տուի. որքան կարող եղայ գրի անցրի: Ահա թէ ինչպէս են նկարագրում հրդեհի սկիզբն ու վախճանը.

Հոկտեմբերի 8-ին խիստ քամի էր: Գիւղացիների մի մասը վարատեղ, մի մասը ցանքատեղ, որն էլ այգում կամ գիւղի ափերում: Գեղամէջում իսկապէս քիչ մարդ են եղել: Գիւղի արևմտեան ծայրին մօտ մի թոնիր է վառած լինում: Այդ թոնիրը տեսայ, որ ծածկ ունի. Թոնրատան երկու կողմը պատեր են, հարաւային կողմը բաց է, իսկ արևելեան կողմը նոյնպէս պատ կայ, բայց նրա և թոնրատան առաստաղի մէջ 1/3 արշ. տեղ բաց է: Թոնրը վառելիս ինչպէս բոլոր գիւղերում սովորութիւն է, երկրագործ մարդիկ կալի հաշանի կամ այգու խոտի համար եղաններ են պատրաստում. այդ օրն էլ այդ թոնրնում մի ջահել տղայ մի եաբա (ուղղաձիգ ճիւղերով մեծ եղան) է խանձելիս լինում որ կեղևը մաքրէ, կոկէ: Խանձել է ու տեսնելով կեղևը վառուել է, ափսոսում է եաբային. քաշ պատի կողմից կոճի ծայրեր կան, մի երկու անգամ նրանց է խփում, յետոյ էլ անփութութեամբ նոյն պատի դրսևը գետնին է խփում, առանց իմանալու որ կարող է վտանգ առաջանալ դրանից:

Գիւղացիք մեծ մասով անփորձ, թափաքեալի մարդիկ են. իմացած բանի մէջ էլ յամառ, չիմացած բանի մէջ էլ: Կանայք չեն համարձակւում ասել այդ երիտասարդին, թէ ախր կրակ կընկնի խոտը: Կամ իսկի որ հարսի մաքրով կամ երկրագործի գլխով կանցկենայ, թէ եաբա թափ տալուց փայտի կտոր կպչուի: Ինչ և լցէ, եղածն ասենք: Երկու րոպէ է անցնում, թէ տասը, մէկ էլ տեսնում են թոնրատան կողքից ծուխ և բոց է բարձրանում. առաջ բանի տեղ չեն դընում, յետոյ նայում են տեսնում, որ հարևանի խոտի դէզի տակ կիտած քեալաշը, ծղնօտը (ձմեռը գոմէշներին ուտացնելու համար են գերանդիով հնձում արտատեղերից) բոցավառուած: Հասնում են և փայտով ծեծելով կամենում են հանգցնել: Դրանց անզգուշութիւնից օգուտ է քաղում քամին, այն էլ խիստ քամին, և կայծերը քեալաշից հասցնում կողքի խոտի դէզին: Խոտատէրն ու հարևանները, փոխանակ թաղիք թրջելու վրան ծածկելու, որ պէծերը դէսուդէն չթռչէն, դարձեալ սկսում են սրուլիկ դէզին ծեծել, վեր հատել: Չկարողանալով չարդախի վրայ հանգցնել, աշխատում են գետին թափել բոցավառուած խոտը: Աջ ու ձախ խոտի դէզեր. անպաշտպան ու կրակի համար պատրաստ կերակուր: Այդ միջոցներում էլ անձրև չեկած, բոլոր խոտերն իրանք իրանց արևի տակ դարձել են չոր խզուզուն:

Մինչև հայ-հարայ տալը, մարդ կանչելը միւս թաղերից, տեսնում են 15 արշին հեռու մի դէզ վառւում է: Ջտապում են դրան օգնութեան հասնել ձեռով, փայտով, բայց ոչ թէ թաղիքներով կամ ջըրով: Ոչ ոքի խելք չի կտրում թաղիք թրջել սկզբից, երբ քեալաշն էր այրւում, կրակի ծաւալը քիչ լինելով հեշտ կարելի էր հանգցնել: Իսկ ջուր հասցնում են այնքան, որքան իրանց տան կժերում կայ: Լայնաբերան ջրաման, չափ չկայ, ամենն էլ նեղաբերան կուլաներ, տասնեակ րոպէներ պէտք է սպասել մինչև քլքլալէ, քրքզալէ դարդակուի: Նրա հանգցրած կրակն ինչ պէտք է լինի: Փորձել են մի քանի կուժ ածել: Դատարկուելուց յետոյ լցնել է հարկաւոր որ ահեղ կրակի վրայ ածուի, բայց... վիզը կոտրուի Ղալագէի աղբիւրների շինողի կամ սազացնողի. այնքան հեռու են և այնպիսի դժուար ճանապարհով, որ սատանան ինքը մի ժամում չի կարող մի փարչ ջուր հասցնել հրդեհի տեղը. այն ինչ կրակը քամու միջոցով թևաւորուած հսկայական ոստումներ անելով մի դէզից միւսն է անցնում, լպանձում, խորովում, այրում, դաղում: Դեռ երբ մի քանի դէզ կամ փշի չափար է եղել վառուելիս գիւղացիք անհոգ, միամիտ են եղել, յուսալով որ շուտով կրակը կը հանգցնեն, կամ ինքն իրեն կըմարի: Միայն աշխատել են կրակի առաջը կտրել, նրան դիմադրել, այս ու այն դէզը նրա ճանկից, ահռելի բերանից ազատելով. բայց երբ—այսինքն քեալաշի վառուելուց տասն րոպէ յետոյ—նկատել են որ կրակն այլևս իրանց չի նայում, ամեն ինչ լափելու ետևից է. մի տեղ մարագի կոճերն են ճրճռում, թափւում, միւս տեղ տան ցխքերը, սրահներն են հրհրատում ահեղ կրակի բերանում, երրորդ տեղ դռների կիտած փայտ ու ճախն են ճրճրթալէ այրւում և պէծերը երկինք վեր հանում. վայնասուն գցում են գիւղը և աշխատում կրակի ճանկից պրծնելու իրանք, տեսնելով որ չկարացին պրծացնել արիւն քրտինքով շինած, սարքած իրանց տուն ու տեղը: Քամին արևմուտքից արևելք է փչում, ոռնում, շառաչում, և ամեն մի ոռնալիս, շառաչելիս դէզեր, գոմեր, տներ փլում, կործանում: Կործանելուց յետոյ նորից հոսան անում, վրայ պրծնում փայտի, խոտի, գերանի, լծկանի, անասունների, կնկայ, աղջիկ ու տղի, տղամարդի: Անիրաւը շնչաւոր և անշունչ չի հարցնում, որոնք փախչել են ճգնում, քամին ուժով կամ կանգնեցնում է տեղն ու տեղը, կամ թրևում իր ալիքների մէջ գցում: Սկսուելով մի քանի կապուկ ծըղնոտից կամ քեալաշից, հետզհետէ ընդարձակւում է ծաւալը և գիւղի միջուկը գրկում ու կամաց-կամաց խտիտը մեծացընելով գնում դէպի եկեղեցին ու դպրոցը:

Մինչև այդտեղ հասնելը հրդեհն այնքան ուժեղացած է լինում, որ 60—70 սաժէն լայնութիւն ունեցող գերանդիի նման հնձելիս է եղել ամեն բան: Երկինքը գլխներին կարծես մթնում է, երբ տեսնում են գիւղացիք որ կրակը ս. եկեղեցուն էլ հասաւ: Գոռուն ղօչունը շատ վերստեր հեռու լսուելիս է եղել, իսկ ծուխն ու մուխը Դէօգչայ աւանում նկատուելիս, որ բաւական լեռներով անջատուած է 27 վերստի վրայ Ղալագէից: Քառորդ վերստ երկարութեամբ հրդեհը մեկնուած, 60 սաժ. էլ լայնութիւն բռնած ինչ մեծութիւն կունենայ, կարող է երևակայել ամեն մի ընթերցող կամ լսող:

Այդքան տարածութիւնը դաշտ չի, կամ այլ ազատ գետին, այլ ըստ սովորութեան հայ գիւղականի, իրար մօտիկ շինած տըներ, գոմեր, բնակութիւններ: Տները կանանցով, մանուկներով են լիքը, գոմերն էլ տաւարով, լծկան եզն ու գոմէշով: Ջատ տան տղամարդ չկայ, ինչպէս ասացի. պատկերացրէք կանանց, հարսների, աղջիկների, մանուկների իրարանցումը: Չգիտեն ում օգնութիւն կանչեն, ում դիմեն, ուր փախչեն, կամ եթէ փախչեն, տունն ինչ անեն: Ախր այնտեղ է ամեն ինչքը, հարստութիւնը, ապրուստը. նը բանցից որը վերցնի, որը թողնի: Նա կուզի բոլորն էլ շալակի, բայց ով է ժամանակ տալիս: Կրակը որ հինգ րոպէից առաջ թաղի գլխին էր, այժմ հարևանի տունն այրած վերջացրած, իր կոճերն ու խոտն է ձեռք առել: Վախից խելքը կորցնում է, չգիտէ փախչի թէ կանգնի: Համ փախչում է, որ ջանն ազատի, համ էլ յետ է դառնում որ տան կայքը դուրս կրի: Տեսնում է կայքը ձեռքից ընկաւ, վրայ է ընկնում ծծի երեխէն օրօրոցով փախցնում:

Ջատ մարդ ջուր չգտնելով վազում է գինու կարասը դարդակում, բերում իւր սրահի բոցավառուած կոճերի վրայ ածում, որ տունը, ընտանիքը ազատի:

Այո, շատերը գինու միջոցով են կրակ հանգցրել:

Հրդեհի սկսուելուց 20 րոպէ չանցած գիւղի մի ծայրից մինչև միւս ծայրը կէս վերստ տարածութեան վրայ ինչ որ խոտի դէզ, ինչքան որ փայտ ու ճախ է լինում, ամենն էլ վառուած հանգչելու վրայ են: Հէնց այդ խոտ ու ճախերի շրջափն է, որ մօտենում է եկեղեցուն ու դպրոցին և սկսում վառել, կառ գըցել: Թէ եկեղեցին և թէ դպրոցը մեծ շինութիւններ են, այն էլ կղմինտրածածկ. երբ վառուելն սկսում են, աւելի զօրեղացնում են կրակը և իրանցից դէպի արևելք գտնուող տները իրանց բոցերի ու հուրքի մէջ ծածկում: Հէնց այդ թաղամէջումն է լինում ամենամեծ կորուստները: Եկեղեցին վառուելիս տեսնելով՝ շատերի ծնկները թուլանում են. շատ են ուժ անում, չեն կարողանում փախչել լքուելուց: Շփոթուելն ու խելք կորցնելը այդ միջոցին է լինում. շատերի լծկանն է գոմում մնում և այրւում կամ ծխից խեղդուում, շատերի երեխաներն են գոմերում ու տներում մնում, շատ հարսներ փախչելիս բոցավառւում տեղն ու տեղը մոխիր դառնում, մի քանիսն էլ անզօր լինելով տնից շէմք դուրս գալու, վառուած կոճերի տակ են մնում և այրւում: Հրդեհը ուր պատահել է, զառի վայրի նման տեղ է, դէպի վերև, գիք է, դարիզուս է. փախչելը դժուար, թէ դէպի ներքև էլ վազեն կընկ-

*) Տես «Արձագանք» № 140.

1893-ին ուսանողներից առաջին տեղը բռնում են Հայերը—18 մարդ կամ գիմնազիայում բոլոր ընթացաւարտների թուի 9,3%, ապա հետեւում են ռուսները—9 մարդ կամ 3,4% և վերջապէս վրացիքը—6 մարդ կամ 5,2%։

* * *

Երեւանի նահանգի Սուրմալու գաւառի ոստիկանական պրիստաւ Ալեքսանդր Մելիք-Ադամալեանցը պատասխանատուութեան էր ենթարկուած պաշտօնի վերաբերեալ յանցանքների համար։ Թիֆլիզի դատաստանական պալատը պ. Մելիք-Ադամալեանին յանցաւոր ճանաչեց՝ առանց օրէնքով պահանջուող ձեւի Մաշմեդ-օղլուն ազատութիւնից զրկելու համար և խիստ յանդիմանութեան դատապարտեց, իսկ միւս յանցանքների նկատմամբ նորան պալատն արդարացրեց։

Դատախազի տուած բողոքի համաձայն կառավարիչ սենատն այդ գործը քննելով՝ Մելիք-Ադամալեանին յանցաւոր է ճանաչել գիւղական տանուտէրի օգնականին ազատութիւնից զրկելում, իւր իշխանութեան սահմանից անցնելում, որով հրամայել է խազախներին Հուսէյին-օղլու տանից հիւրերին դուրս քշել, ապօրինի կերպով երեք հոգու ազատութիւնից զրկելում և գործով նոցա անպատուելում, այլ և գիւղացի Յովհաննիսեանցին անպատուելում։ Այս բոլոր յանցանքները ամբաստանեալը գործել է իւր պաշտօնական պարտաւորութիւնները կատարելիս, ուստի և սենատը՝ պալատի դատավճիռը ջնջելով, Մելիք-Ադամալեանցին հաուպտվախտում երեք ամսով բանտարկութեան դատապարտեց։

* * *

Նորերումս Ս. Պետերբուրգի քաղաքային խորհրդի դահլիճում կայացաւ օրթոդոքս Միսիօնարական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղւոյն թեմական առաջնորդ Նիկանոր եպիսկոպոսի նախագահութեամբ։ Տարեկան տեղակագրից երեւում է, որ ընկերութիւնը 1891 թ. ունեցել է մուտք 335,925 ռ., ծախք՝ 232,736 ռ. և պահեստի գումար 1,000 000 ռ.։ Ընկերութիւնն ունի իւր իշխանութեան ներքոյ 13,000 հոգի միսիօնար։ 1892 թուականին Ղազան քաղաքի հոգևոր ճեմարանում սկսել են դասախօսել միսիօնարութեան վերաբերեալ առարկաներ։

* * *

Ռուսաստանի մի քանի գիւղական հասարակութիւններ որոշել էին արգելել մասնաւոր անձանց գիւղերում գինետներ ունենալ և վաճառել, և բանալ հասարակական գինետներ։ Հէնց առաջին տարիներում այս հասարակական գինետները մեծ նիւթական օգուտներ բերին գիւղական համայնքներին, տալով զուտ արդիւնք՝ 600 մինչև 3000 ռուբլի տարեկան։ Այդ արդիւնքից գիւղացիք հաստատում են հարկերի ապառիկները, կառուցանում են դպրոցներ, ջրաջացներ, որոնք նմանապէս արդիւնք են բերում, ձեռք են բերում կատարելագործած երկրագործական մեքենաներ, որոնցից հերթով օգտւում են, շինում են ճանապարհներ և այլն։

* * *

ՆԱՄԱԿ ԹԷՋԻՆԻՑ (Անդրկ. երկիր)

Ձեր համակրելի հրաւէրը, յօգուտ Ղալագէ գիւղի հրկիզեալների, արձագանք տուեց նաև Թէջինի սակաւաթիւ հայ երիտասարդների մէջ, որոնք չխնայեցին իւրեանց ունեցածից մաս հանել իւրեանց դժբախտ և կարօտեալ եղբայրներին, որ և հանդերձ նուիրատուների անուններով ուղարկում եմ Ձեզ, յարգելի խմբագիր, խոնարհաբար խնդրելով այս չնչին գումարն ևս աւելացնել Ձեզ մօտ ունեցածի հետ և ըստ պատկանելոյն հասուցանել։

Նուիրատուներն են՝ Եղ. Յ. և Ա. Գրիգորեանցներ 1 ռ. 50 կ, Գ. Մարգարեանց, Ն. Տէր-Օհանեանց, Յ. Նազարէթեանց, Մ. Սարգսեանց. Н. Чеснаковъ, Մօլլա Մուսա Էֆէնդիեվ, մէկ մէկ ռուբլի, Ա. Ղարադեօզեանց, Յ. Սարգսեանց և Ի. Ամիրջանեանց 50 կոպէկ։ Ընդամենը ինը ռուբլի։

Գաբրիէլ Մարգարեանց։

21 նոյեմբերի 1893 թ.

* * *

ՆԱՄԱԿ ՆՕՎՕՉԵՐԿԱՍԿԻՑ

Ուղարկելով Ձեզ 27 ռուբլի յօգուտ Ղալագէ գիւղի հրկիզեալների, որ ժողովեց օրիորդ Հռիփսիմէ Չորչոփեանը Նովօչերկասկում բնակուող սակաւաթիւ հայերի մէջ, խնդրում եմ այս գումարը հասցնել մեր տարաբաղդ եղբայրներին։

Յովհաննէս Չորչոփեան։

20 նոյեմբերի 1893 թ.

* * *

Յօգուտ Ղալագէի հրկիզեալաց մենք ստացել ենք այսօր 36 ռուբլի Թէջինից և Նովօչերկասկից և ուրեմն մեր խմբագրութեան մէջ յիշեալ նպատակի համար ստացած ընդհանուր գումարը կազմում է 1636 ռուբլի։

* * *

«Նոր-Դարին» հաղորդում են Ս. Էջմիածնից, որ գերապ. Գրիգորիս եպիսկոպոս Աղաւնեանցը մնալով սինոդի անդամ, նշանակուած է Ատրպատականի առաջնորդ. Վեհափառ Հայրապետը նորին գերապատուութեան արքեպիսկոպոսութիւն է տուել։ Աղաւնեանց սրբազանի հետ Ատրպատական է գնում և Սահակ վարդապետ Այվազեանը, որ Վեհափառ կաթողիկոսի հետ եկած էր Եւրոպայից։

* * *

Նորերումս լոյս է տեսել հետեւեալ ֆրանսերէն գրքոյկը. G. Des Godins de Souhesmes. - Souvenirs d'Orient. Courtes notes sur l'Arménie.

Ֆրանսիացի հեղինակը մեծ համակրութեամբ է խօսում հայերի, մանաւանդ հասարակ դասակարգի մասին։

* * *

ԵՐԵՒԱՆԻ նահանգում նոյեմբերի 27-ից մինչև 29 ը խօլերայով բռնուել են 4 մարդ և վախճանուել 2-ը։

* * *

ԲԱԳՈՒԻՑ մահմեդականները խնդրամատոյց են եղել պ. նահանգապետին, որ իրանց թոյլատրուի քաղաքում մի մահմեդական ընթերցարան բանալ այն գումարով, որ նոքա հանգանակել են իրենց մէջ։

* * *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ հեռագրում են ‹Նով. Աբ.›. ‹Ուսումնարանական յանձնաժողովի նախագահ նշանակուեց՝ Ստեփանէ։ Անդամներ՝ Խոջայեան, Միաբան, Մագաթեան, Սագաթելեան›։ Մեզ մնում է բացատրել միայն այս շարադը. Ստեփանէ—Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէն է. Խոջայեան — Նորընծայ Լևոն վարդապետն է. Միաբանը—տիրացու Գալուստ Տէր Մկրտչեանն է, Մագաթեանը—Եղիշէ Մագաթեանն է, իսկ Սագաթելեանն էլ—Սագաթելովն է։

* * *

Մենք հաղորդել էինք, որ ռուսաց երկաթուղիների գլխաւոր ընկերութեան մէջ ծառայող բոլոր կանանց որոշուած էր զրկել պաշտօններից. այժմ մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ դոցա տեղը բռնելու են պաշտօնաթող զինուորականներ։

* * *

Կանանց կրթութեան բարեփոխման ծրագիրը կքննուի պետական խորհրդում դեկտեմբերի 9-ին։

* * *

‹Արձագանքի› անցեալ համարում Մոսկուայի թղթակցութեան մէջ պատահաբար մի սխալ է սպրդել—տիրացու Գալուստ Տէր-Մկրտչեանցը անուանուած է աբեղայ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Անգլիերէնին քիչ թէ շատ տեղեակ անձինք կամ նոյն իսկ որևէ եւրոպական լեզուով լրագիր կարդացողներն անշուշտ գիտեն թէ ինչ բան է high-life-ը։ Այդ բառը, որ ինքն ըստ ինքեան մի անմեղ իմաստ ունի («բարձր կեանք»), պէտք է եղել Կ. Պոլսի մի առևտրականի, որ և գործ է ածել այն իւր հանդերձեղէններն ’ի վաճառ հանելու համար տպագրուած յայտարարութեանց մէջ։ Չար բաղդի բերմամբ, հայերէն տառադարձութեամբ այդ բառը «հայ-լայֆ» տպագրուելով այնպիսի մի փորձանք է բերել տպագրիչ Մինասեանի գլխին, որպիսին հարկաւ միայն Թիւրքիայի մայրաքաղաքում կարող էր տեղի ունենալ.

‹Թիւրք կառավարութեան լրտեսներէ մին, կարդում ենք արտասահմանի մի լրագրում, կերթայ կիմացնէ իր գլխաւորներին թէ Բերայի պատերին վրայ մի վնասակար յայտարարութիւն փակցուած է. Տպագրիչը, Պր. Մինասեան, կը ձերբակալուի և բանտը կը նետուի։ Շատ մեծ թախանձանքներէ և ջանքերէ յետոյ հազիւ կը թոյլատրուի իրեն ներկայանալ ոստիկանութեան նախարար Նազըմ պէյին, որին կը բացատրէ իր ծանուցման իմաստը և ‹հայ լայֆ› բառին անմեղութեամբ գործածուած լինելը։ Նազըմ պէյ որ գիտէ ֆրանսերէն և կը հասկանայ թէ այդտեղ ‹հայ լայֆ› անգլիերէն բառը գործածուած է Բերայի ‹հարուստ դասակարգ›ին հրաւիրելու համար միայն հանդերձեղէնի վաճառատունը, հրաման կուտայ որ արձակեն տպագրիչ Մինասեանը և բարեկամօրէն խրատ ալ կուտայ անոր այսուհետև այդպիսի երկդիմի բառեր տպագրելէ զգոյշ կենալ›։

Հա՜յ գիտի «Հայ». . .

Այսպիսի պատահարներից ազատ մնալու համար տպագրական խօսքի հետ գործ ունեցողներին Կ. Պոլսում մնում է խնդրամատոյց լինել Բ. Դրան, որպէս զի մի առանձին բառագիրք հրատարակուի, ուր ամփոփուած լինին միայն թոյլատրելի բառերը։

Բ. Դուռն այդ սիրով յանձն կ’առնէ, մանաւանդ որ այդպիսի մի պաշտօնական բառագիրք նա կարող կը լինի իբրև ապացոյց յառաջ բերել, թէ ինչպէս որ իւր քաղաքականութեան մէջ երկդիմութիւն չկայ, այնպէս էլ Թիւրքիայում գործածուող լեզուն չունի երկդիմի բառեր. . .

Ի՞նչ գեղեցիկ նիւթ կարող էր լինել այդպիսի մի հրատարակութիւն Revue d’Orient-ի և Վամբերիի համար Թիւրք կառավարութեան անմեղութեան մասին մի պերճախօս ներբող գրելու։

*** Մոսկվայում, Եւրոպայի հետեւողութեամբ, մի մասնաժողով է ծագել «տնային ընթերցանութեան» գործը կազմակերպելու համար։ Այս առթիւ «Ռուսկ. Վեդ.» լրագիրը ասում է.

‹Որչափ մի երկիր աւելի քաղաքակրթուած է, այնքան աւելի լուսաւորութիւնը դիւրամատչելի է բնակիչներին։ Բացի ամեն տեսակ դպրոցներից, կեանքը լուսաւորութիւնը տարածելու շարունակ նորանոր միջոցներ է գտնում։ Օրինակ անգլիական ‹Տնային ընթերցանութեան ընկերութիւնը› մի բոլորովին նոր տեսակի դպրոց է հանդիսանում։ Այս դպրոցի աշակերտները, որոնք ընդունվում են առանց սեռի և հասակի խտրութեան, իրենց համար հանգիստ տանն են նստած և ընկերութիւնը ղեկավարում է նոցա տնային պարապմունքները փոստային հաստատութեանց միջնորդութեամբ. . .

Արեւմտեան Եւրոպային հետեւելով Մոսկվայի մասնաժողովը որոշել է ժամանակ առ ժամանակ հրատարակել ‹տնային պարապմունքների համար բնաբաններ›։

Այս բոլորը շատ գեղեցիկ է, բայց մի հանգամանք կայ. Եւրոպայում ընկերութիւնը կարող է բաւականանալ խորհուրդ տալով այս կամ այն գիրքը կարդալ՝ այնտեղ ընտիր և մատչելի գնով գրքեր կան. իսկ Ռուսաստանում մասնաժողովի խորհուրդը կարող է լոկ խորհուրդ մնալ, որովհետև գրքերը Ռուսաստանում շատ թանգ են։ Ահա զգալով այս, մասնաժողովը որոշել է.

«Փորձ փորձել ընթերցողներին գրքերի աբօնեմենտ առաջարկել»։

Սակայն այս բանի համար էլ փող է հարկաւոր, որ կարող է տալ հասարակութիւնը, բայց այդ քիչ է. արդեօք կը գտնուի՞ն Ռուսաստանի գաւառներում ձեռնհաս անձնուէր մարդիկ, որոնք զբաղուեն տնային ընթերցանութեան գործի ղեկավարութեամբ։

*** Պ. պ. Գաբրիէլ Միրզոյեանցը և Ստեփան Լիսիցեանցը յայտնում են ’ի լուր աշխարհի հետեւեալը.

‹Անցեալ նոյեմբերի 15-ից մենք այլ և այլ պատճառներով ստիպուեցանք ոչ միայն հրաժարվելու ‹Աղբիւր—Տարազ› հանդէսների մշտական աշխատակցութիւնից, այլ և խզելու բոլոր կապերը այդ թերթերի արտօնատէր պ. Տիգրան Նազարեանի հետ›։

Sic transit concordia hamachohorum!

Բայց մի՞թէ չէք բարեշիլ, խղճացէք հայոց ազգին. մեղք է հայոց գրականութիւնը, հաշտուեցէք։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՆԵՑԻՈՅ

Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ։

Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով ԱՐՇԱԿ ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆԻ.

Վաղարշապատ. 1893. Ս. Էջմիածնի տպ. Մատենադարան Ս. Էջմիածնի № 2. 8°. Լ+301=331. Գինն է 1 ռուբ. 20 կոպ.

Մեր արդի գրականական ճիգերի մէջ յետին տեղն է բռնում նախնեաց երկերի լոյս աշխարհ հանելն և լուսաբանելը, թէպէտ և կան բազմաթիւ գրագէտների անուն սեփականողներ, որոնք կարծում են՝ թէ հայկական հին գրականութիւնն արդէն ի հիմանց ուսումնասիրուած է և ժամավաճառութիւն է այսօր զբաղուիլ զբաղուելը։ Այդպիսիք ժամավաճառութիւն են համարում նոյն իսկ նախնեաց երկերի ընթերցումն և խոշոր քարեր են գլորում այն մարդոց դէմ, որոնք այդ ուսումնասիրութեան ջատագով են։ Եղել են հրապարակախօսներ անգամ, որոնք առանց կարմրելու ծաղրել են մեր հին հեղինակների ուսուցումը հայ դպրոցներում. այդ անձինք գրանով միայն իրենց տգիտութիւնն են ապացուցել և իրենց զարգացման ստոր աստիճանն են ցոյց տուել։ Բնականն է սակայն, որ գիտնականի հռչակ վայելել ցանկացողը հերքէ ամենայն գիտութիւն, որ իւր խելապատահին մատչելի չէ։ Այդպիսիք նման են ճիշդ այն պառաւներին, որոնք պատառաքաղ բանեցնելու վարժ չլինելով հեգնութեամբ ասում են. «մենք որ մատներով ենք կերակուր կերել, նորելուկներից պակաս ենք եղել մի՞յ»։

Այս կարգի իմաստակների քարոզութիւններին ենք պարտական անշուշտ, որ մինչև այսօր մեր գրականութիւնն ասպարէզ է եղել տգէտ թարգմանիչների և ապաշնորհ ու անկիրթ գրչակների շահատակութիւններին։ Այս քարոզութիւնների հետևանք պէտք է համարել և այն երևոյթը, որ Ս. Էջմիածնի մատենադարանը մինչև այսօր մի անծանօթ երկիր է և նրա մէջ գանձուած հարստութիւնը մի անշահ գրամագլուխ է։ Ի՞նչպէս մարդ չվրդովուի ու չը զայրանայ, երբ յիշում է, որ ամենատոկալի հալածանքների ժամանակ,

---

նեն վիհը, դէպի ջրեձորն իջնող անդունդները։ Եկեղեցին այրուելիս կրակն այնքան ուժով է պէծերը շպրտելիս եղել դէպի արևելք, որ երբ աղբահար կոչուած ձորի պանդի տունը բռիշակ անելով էլ ոչինչ չի ունեցել լափելու բացի կաւահողից, ձորի գլխով թռել է և երկու հարիւր սաժէնաչափ հեռու երկու խոտի դէզեր վառել, մոխիր դարձրել։ Դրանք վերջին դէզերն են եղել, որից յետոյ ահագին, դատարկ ձոր է, այրելու ոչինչ չկայ։

Հրդեհի սկսուելուց երկու ժամ յետոյ այրուած վերջացած են եղել տները, գոմերը և ամենը, ինչ որ կրակի բերան է ընկել։

Ով կարողացել է տան սարք ու կարգը, տեղաշորը, որդիքը մի կերպ ազատել է փախցրել այգիքը, որ հիւսիսակողմն են։ Ով կահ կարասին միջոց չի ունեցել ազատելու, որդիքն է ազատել։ Կան մարդիկ, որոնք այդ էլ միջոց չեն ունեցել, թէև ամեն ջանք գործ են դրել։

Մինչև ճաշը կամ ճաշից յետոյ երբ սկսել է կրակը մարմանդել, վէր նստել, ամեն մինը իւր կորուստի ետևից է ընկել, բայց ոչ թէ փող կամ կայք դուրս բերելու կրակի միջից, այլ ազիզ ջանները իրանց որդու, իրանց մօր, իրանց աղջկայ, իրանց կնոջ։

Շրջակայ բոլոր հայ և թուրք շէներից թամաշաւորներ են եկած եղել, որոնք նոյնպէս լալով, արտասուքով օգնելիս են եղել թշուառացած ղալագեցոց։

Իրար ետևից հանուել են հողի կամ խանձուած գերանների տակից դիակները։

Իմ ձեռքով գիւղացիներից ժողոված տեղեկութիւններից կը հանեմ հրդեհի տուած վնասները, թող ընթերցողն ինքը հաշուէ նրա մեծութիւնը։ Թէև ինձ ասողներ եղան, որ Գէօզչայ աւանի գաւառապետի դիւանից ձեռք բերեմ Ղալագէին հասած վնասների ցուցակը, բայց ես լաւ համարեցի անձամբ հարց ու խնդիր լինել, տեղն ու տեղը իմանալ և գրի անցնել։ Կարծում էի որ իմ ժողոված աւելի ճշտութեան մօտիկ կլինի. այժմ անցել է, տպաւորութիւնն էլ մասամբ մեղմացել, գիւղացիք եղած վնասներն աւելի ճիշտ կշռած արդար կասեն առանց բան աւելացնելու։

Հրդեհը վնաս տուել է 180 ընտանիքի. դրանցից որի տունն է այրել, է որ տունն ու գոմը միատեղ, կամ տունը, գոմը և խոտի դէզը միասին։ Մարդ կայ որ դրանց հետ լծկան անասուններից է զրկուել, կոյ մարդ էլ, որի ընտանիքի մի կամ երկու անդամն են կրակին զոհ գնացել։ Կայ մարդ, որի տան մէջ արծաթ փողն է փչացել, կորել, կայ մարդ էլ, որի բաւական թղթադրամն է այրուել։

Փողի, դրամի կորուստների չափին, քանակին հաւատալ քիչ դժուար է. փող հոգի, մարդ ինչ իմանայ, ճիշտ են ասում թէ աւելացնում են։ Համարելիս մեզանից ով է եղել կողքին։ Բայց տնատէրերը աշխարհաւ երեւում են, սուտ ասելու ինչ կայ։

94 տուն ամբողջովին այրուել են. այրուել է ոչ թէ գերանը, այլ և տակի հողը։ 15 տուն կիսայրեալ վիճակում ազատուել են։

Այդ տների մեծ մասը գետնափոր են, բայց կան մի քանի երկյարկանի փաքրիկ տներ։ Այրուել է 136 գոմ, նրանց մէջ այրուել կամ ծխից խեղդուել են 8 գոմէշ, 7 եզն, 3 կով, 8 մոզի, 5 էշ, 3 ձի։ 180 տան առաջ դարսած բոլոր ճախ ու փայտը այրուել է. եթէ առնուազը իւրաքանչիւր շինականի ճախ ու փայտը 5 սայլ գցենք, կլինի 900 սայլ։ Դրա արժէքը ընթերցողը թող հաշուէ, և իմանայ որ մենակ այդ չէ դեռ վնասը. 144 դէզ էլ խոտ է այրուել մեծ մասով չարդախների հետ. դրանց արանքում էլ այրուել, կոտրուել 71 փեթակ ճանճ. էլ չեմ հաշւում թէ որքան հաւ, ճիւ են կրակուել, որքան կարպետ ու խալիչա, որքան ալիւր, ընդեղէններ լի., որքան սպրուստի պաշար, եղ ու պանիր, ամանեղէն, զութանի ու կալի սարք։

Ինչպէս յիշեցի տների մէջ այրուել է եկեղեցին. հոյակապ շինութիւնից այժմ մնացել են խանձուած, ճաքճքուած պատերը 4—5 արշին բարձրութեամբ։ Փայտեղէն տանիքից, փայտէ հաստ վեց սիւներից մի կտոր բան չի մնում, կտուրի կղմինտներն անգամ մաս ու փշուր են եղել։ Միայն խաչերի և սեղանի ծածկերն են տեղը մնացել, որովհետեւ քար ու կրից են։ Միջնորմները պատառուել են։ Եկեղեցու լայնութիւնը պատերն էլ հետը, 16 արշին է, իսկ երկայնութիւնը արևմտեան ճակատից մինչև սեղանի պատը 28 արշին։

Եկեղեցու տանիքը նորաշած—ներսը փայլոյ կերպով բարեզարդած եղել հենց անցեալ տարի և 1200 ռ. չափ փող ծախսած։

Այժմ թուեմ եկեղեցու մէջ այրուած իրերի քանակութիւնը։

Ինչ էլ յիշատակեմ, բոլորն էլ այրուած են, ինչպէս երդումով վկայել են Ղալագէի երկու քահանայքը։

Եղել է հին վարագոյր Եզայի շէնացի Ծատուրի նուիրած. կրելիս է եղել 1777 թ.։

Մի ճաշոց, երկու ձայնքաղ շարական հին և նոր. ձայնքաղ ատենի, ատենի ժամագիրք, 2 գրքակալ, 2 ջահ իւրաքանչիւրը 30 մնթ., հին գրչագիր աւետարան, որ կոչւում էր կարմիր և մեծ հռչակ ունէր Գէօզչայի շրջակայքում. 6 խաչ արծաթեայ, բշոց, 2 խաչվառ, 3 բուրվառ հին և նոր. 5 աշտանակ հին և նոր Տիրամօր պատկերներ 5 հատ, որոնցից մինը հին է եղել և մեծագիր. հասարակ մետաղէ խաչ 7 հատ, պղնձէ շամադաններ 12 հատ, 1 տօնացոյց, 2 հատ ձեռի աւետարան, 3 հատ մաշտոց, 2 սկիհ, որոնք կիսայրուել են, սևացել։ Զգեստ եղել է 2 ձեռք. մինն այրուել է բոլոր պարագաներով. 4 կարպետ, 2 գորգ, միւսը շշով. խորանի ծածկոցները, սեղանի վէմ քարի վրայ գտնուող բոլոր փառցներն ու մետաքսէ թաշկինակները։ Վէմ քարն անգամ փշրուել, հետքը չի մնացել։

Գանք ուսումնարանի շինութեան, դա բակով կից է եկեղեցուն նայում է դէպի արևմուտք. հիւսիսային պատը գրեթէ կպած է եկեղեցու ձախակողմեան խորանի պատին։ Դպրոցի շինութիւնը պատերի հետ 25 արշ. երկարութիւն ունի և 6 1/2 արշ. լայնութիւն առանց պատերի. Նոր և ամուր շինութիւն է եղել, տանիքը, ձեղունայարկ ամենը խնամքով շինած, կղմինտրով ծածկած։ Ամառ ժամանակ գիւղից ցորեն է ժողոված եղել ամբարի անունով, և այլ յարմարաւոր տեղ չգտնելով թափած դպրոցի մի սենեակում տախտակէ յատակի վրայ։ Միւս սենեակում հաւաքած են եղել աշակերտական նստարանները։ Հրդեհը լափել է ամբողջ շինութեան փայտեղէն մասը, թէ տանիք, թէ մէջի 400 փ. ցորենը։ Մնացել են պատերը երեք արշ. բարձրութեամբ, այն էլ տեղ տեղ ճաքճքած։

Ղալագէում, ինչպէս ասացի, 180 տուն վնաս են կրել հրդեհից, բայց դրանց մէջ 20 ընտանիք իսկ կսկծալի կորուստ են ունեցել. այն է 28 հոգի, մեծ մասով հարս ու աղջիկ, այրուել են փչացել։ Մի առ մի տների անունն ասեմ.

1, Պօղոսանց Գիւքիւ տանից 40 տարեկան մի կնիկ և 3 տ. մի աղջիկ։

2, Դանէլանց տանից մի հարս ութ տարուայ պսակուած, և մի հասակով կոյս աղջիկ, որի դիակն անգամ չեն գտել մինչև օրս։

3, Դումուրչանց տանից մի հարս, 17 տարեկան միայն, 4 տ. պսակուած։ Փախչելիս կրակը կպել է փեշերին։

4, Զարգեարանց Թինու կնիկը 35 տարեկան, փախչելիս շորը վառուել է և այրուել։

5, Քեալունց Թինու կնիկը 50 տ. և իւր հոգևորդու նորահարսը 15 տարեկան։

6, Քեալունց Վանու աղջիկը. 4 տարու պսակած. փախչելիս է եղել հօրանց տուն, երբ ազատուի։ Դրա հետ և միւս աղջիկը 5 տարեկան։

7, Քեալունց Բէհբութի 7 տարեկան տղան փախել է դէպի սրահը, որ բոցից ազատուի, տան հետ վառուել է։

8, Մինամանց Սառա պառաւը հիւանդ է եղել, իւր սրահումն էլ խանձուել է։

9, Ակոբանց Գասպարի կնիկը 35 տարեկան, իր բակում կրակը փեշերին-ոտաշորին կպել է ու փռուել։

10, Գասպարի եղբօր աղջիկ երեխան օրօրոցի մէջ մնացել է և ծխով խեղդուել։ Մայրը կրակի միջից հազիւ կարողացել է դուրս փախչել։

11, Զոհրանց Ալէքսանի կնիկը 20 տարեկան. յղի է եղել և ազատուելու մօտ։ Իւր վառուած տնից ծկլթալով դուրս է փախել հարևանի տուն մտել, չկամենալով ոչ հրդեհը տեսնել և ոչ ձայն, վայնասուն լսել. ծալքից մի եօրղան (վերմակ) է վերցրել, փաթաթուելով մտել քնդուկի մէջ, կարծելով թէ կրակը իրեն այդտեղ չի հասնի։ Այրուել է կուէ քնդուկը, մէջն էլ հարսը։

12, Այդ նոյն տանից փախչելիս է եղել Գիւքու կնիկը, վառուել է ու այրուել. Ո՛րքան պատուական հայ. որքան ընտիր գիւղացի էր այդ վիթխարի Գիւքիւն. Ա՜հ, թէ իւրաքանչիւր գիւղ դրա նման յիսուն անարատ և անվախ հոգով որդի ունենար. պարծանք կլինէր թէ իրեն, թէ հայ աշխարհին։ Աստուած այդ գիւղացուն տուել էր և ամուր ջիլեր և վառ հարստի ճակատին ամեն պակասութիւն ասող հոգի։ Ստրկական բնոյթը մեր գիւղացոց տունը քանդել, բրիշակ է արել. վախից սորկանում են, սսում են ունևորի, աղայի առաջ. բայց Գիւքիները տկունութեան, ազնիւ աշխատութեան որդիները ոչ մի գնով չեն ընկճւում տմախօս փողատէրի, կեղտոտ, անազնիւ աղայի, ծոծի խելք ունեցող գիւղական իշխանների առաջ։

13, Դէրունց (Տէրտէրանց) Գրիգորի կնիկը 50 տարեկան, կրակից այրուել

մթամած ու խաւարային դարերում, Հայ վանքերում աւելի գիտնական ու գրական կեանք է եղել, քան թէ մեր լուսաւորեալ դարում, որի անունով այսօր ամենայն մի Հայ տղայ և ամենայն մի անգրագէտ գիւղ պարծենում է։ Մեր միակ վանքը, որ այսօր կանգուն է, Ս. Էջմիածինն է։ Սա սպառելով միւս բոլոր վանքերի կենսական ոյժն, այսօր միակ կենդանի վանքն է, ուր դեռ ևս վանականներ կան, չենք ասում վանական միաբանութիւն, որ վերացել է մեր միջից. . . .

Այս վանքի և ամբողջ Հայ հոգեւորականների բերան «Արարատը» ամեն տեսակ նիւթ ամփոփել է իր մէջ, սկսած Դարվինի թէօրիայից մինչև «Լիստոկների» ջոճով խմբագրուած հրապարակագրութիւններ. սկսած վեհարանի խոհանոցում սպառուած լոբու և սիսեռի հատիկների հաշուից մինչև Լ. Տօլստոյի վերջին դաւանցանքները, սակայն նախնի մատենագրութեան ուսումնասիրութիւնը չէ եղել նրա նպատակը։

Մեր վանականները թարգմանել ու հեղինակել են շատ անշահ երկեր, սկսած Պրեպէլի չհասկացուած թարգմանութիւնից մինչև Էլիզէ Ռըկլիւի կարևոր աշխարհագրութեան հատուածները, սակայն նրանց մէջ նախնեաց երկերի ուսումնասիրողները մոլորուած և պատահական անձինքն են եղել միշտ։

Վերջին անիշխանութեան շրջանում, երբ հերոստրատեան փառասիրութեան եռանդն էր տիրում, քանի մի հրատարակութիւններ գոնէ եղան, որոնց համար շնորհակալ պիտի լինինք։ Թէպէտ այս հրատարակութիւնների շարքը բացուեցաւ հերետիկոսական հեղինակութիւնների վերաբերեալ հատորներով (կարծես թէ ուղղափառականն արդէն սպառուել էր), բայց ուրախ ենք, որ վերջացաւ Սամուէլ Անեցու ժամանակագրութեան հրատարակութեամբ, որ վաղուց սպասուած մի ցանկալի հրատարակութիւն է։

Այս տխուր փաստերն արձանագրելով չեմ կամենում միայն քարընկեց լինել անիշխանական ժամանակի վրայ, իմ հայեացքով նախընթաց ժամանակներն այս վերաբերութեամբ միահաւասար դատապարտելի են, լինին իշխանական թէ անիշխանական։

Ցիրաւի ա ռ մի ցաւալի երևոյթ է և երանի առաջիկայն այս կողմից չնմանէր անցեալին։

Եթէ վերցնենք Ս. Էջմիածնի տպարանի ([illegible]) գրոց ցանկը, զարմանքներս կարող չենք ծածկել այն կատարեալ ապարդիւն գործունէութեան վրայ, որ երևում է այդ ցանկից։

Ինչո՞ւ խարխափենք անստուգութեան մէջ. մեր եկեղեցական անհրաժեշտ մատենագրութիւնն անգամ ամբողջ լոյս չէ տեսել այդ տպարանից։

Գիտէ՞ք որ մենք Ս. Էջմիածնում տպագրուած Ս. Գիրք անգամ չունինք։

Այս մի վկայական է մեր անցեալ կեանքի մեռելութեան։

Դարուս սկզբից արդէն կան հրատարակուած Ս. Էջմիածնի հին հեղինակների երկեր, սակայն նրանք ամենն էլ թերութիւններով միմեանց հետ մրցակից են։ Զրպարտարկենք ժամանակներն ու անձինք, նրանք միմեանց ծնունդ են. ժամանակը գործիչներին է ծնել, իսկ սրանք ապագայի ողորմելի պատմութիւնն են ստեղծել։

Այս դառն դանդաղն տխրուած է մարդ բարձրաձայն անելու, որպէս զի ապագայի համար խրատ լինի։

Եւ ինչպէս մարդ իւր սրտի փղձուկը չթափէ, երբ համեմատում է Մխիթարեան միաբանութիւնը մեր միաբանութիւնների հետ և կամ լաւ ևս, երբ համեմատում է 14—18 դարերի հայ վանքերի գրական գործունէութիւնը տասն և իններորդի հետ, որի արդիւնքն եթէ հնից պակաս չլինէր, պէտք է նրան հաւասար լինէր։

Այս ապարդիւն վանական կեանքի գաղտնիքը ես այլ կերպ կարող չեմ արտայայտել, բայց եթէ վեհ. հայրիկի խօսքերով. «մեր վանքերն ու վանականները աշխարհականացել են»։

Բայց դառնամ Սամուէլ Անեցուն։

Ցարդ եթէ Ս. Էջմիածնի մատենադարանից հրատարակութիւններ եղած չեն, դրա մէկ պատճառն էլ երկիւղածութիւնն ու գործի ծանրութեան զգացումն է եղել. մարդիկ կամեցել են և միջոց էլ ունեցել են հրատարակութիւններ անելու, սակայն չեն վստահացել մեծ գործեր յանձն առնել և թերի կատարել։ Այս է այն միակ պատճառը, որ քիչ մեղմացնում է անցեալի յանցանքը, մինչ դրա դէմ մեղանչողներինը ծանրացնում։

Սամուէլի ժամանակագրութիւնը հրատարակել—չէ նշանակում որևէ մի հեղինակի գործ արտատպել, այդ մի շատ ծանր, տաժանելի և միանգամայն վարձատրուող գործ է։

Այս պարզաբանելու համար ստիպուած հետևեալ նախածանօթութիւնները պէտք է տամ։

Գրականութեան ընթացքը հետևեալ աստիճաններն ունի. ծնունդեան, բարգաւաճման, ինքնուրոյն, արտադրութեան և ճոխութեան դէպի վեր ելնող աստիճաններն ու վերլուծութեան, անկման, քայքայման և բեկորների կարկատման իջնող աստիճանները։

Մեր հին գրականութիւնը հինգերորդ դարու սկզբում ծնաւ և սնաւ թարգմանութիւններով, բարգաւաճեց ինքնուրոյն երկերով նոյն դարու կիսին սկսած մինչև վերջը, ապա ճոխացաւ տարբեր արժէք ունեցող գանձերով մինչև երկոտասաներորդ դարը, որի ընթացքում հինը բոլորովին ազգային սեպհականութիւն դարձաւ, յետոյ երկար դարեր հնի որոճալով և բեկորների կցկցելով միայն ապրեցաւ մինչև մեր դարու սկիզբը։

Այս անկման դարերում նոր ոչինչ չստեղծուեց, նորը կերպարանք ունեցող երկերն էլ հնի վրայ ձևուած ու նրանցից փոխ առած հնոտիներով կազմուած են։

Խօսքը մեր առաջիկայ նիւթին դարձնելով՝ պատմական գրականութեան հետևեալ ընթացքի վրայ պիտի մատնանիշ լինիմ։ Եւսեբիոսի քրոնիկոնի թարգմանութիւնը մայր եղաւ մեր գրականութեան պատմական ճիւղին, որի ինքնուրոյն ու հայ ժառանգն եղաւ Մովսէս Խորենացին, իսկ սրանից վերջը եկածներն անընդհատ յետնորդներ են իրենց մօրը։ Խորենացուց վերջն եկող հայ պատմագիրներն ընդօրինակողներ են նախ Եւսեբիոսի և ապա Մովսէսի, որոնցից յետոյ նոյն ոճով և պատմական աւելի ստոր հասկացողութեամբ կցուած են յետագայ ժամանակների իրողութիւնները։

Կարելի է և հաւանական իսկ է, որ այս ընդհանուր օրինակներից շեղուող պատմագիրներ ևս եղած լինէին. բայց նրանք ընկճուել, ջնջուել են այս երկուսի հեղինակութեամբ, որոնց ոյժ էր տալիս և Ս. Գրքի հեղինակութիւնը, որի հետ նրանք պատմութիւնը հաշտեցրել էին։

Այս է ահա այն շատ անգամ չհասկացուած պատճառը մեր պատմագիրների Ադամից սկսելու փաստին։

Պատմագրութիւնը նոյն ընթացքն է ունեցել և Եւրոպայում. Եւսեբիոսի քրոնիկոնի լատիներէն համառօտութիւնը, որ արել է Հերոնիմոսը, գեղագրութեան օրինակ է դարձել ապագայ յոյն, լատին և եւրոպական բոլոր ազգերի քրոնիկոնների։ Եւրոպայի միջնադարեան պատմութեան աղբիւրներն են այն անհամար քրոնիկոնները, որ գրուել են թէ Բիւզանդիոնում, թէ Իտալիայում, թէ Գաղղիայում, Գերմանիայում ու Անգղիայում։

Պատմագրութեան (Historiographie) հետ ծանօթ անձն այս պատճառով իսկ անդատապարտ պիտի թողնի մեր Ասողիկին, Թովմային, Սամուէլին և այլոց։

Պատմագրութեան այս ոճը հաստատելուց յետոյ հեղինակի անհատականութիւնն իսկ կորչում էր, այնուհետև չկար պատմագրութիւն, այլ կար միայն ժամանակագրութիւն։

Ժամանակագրութիւններն այն աստիճանի ընդհանուր ձև ունէին, որ շատ անգամ մի անձի հեղինակութիւն շարունակւում էր առանց ձևի և լեզուի փոփոխութեան և հազիւ հնարաւոր էր լինում զանազանել շրջաններն ու հեղինակները։

Այս հանգամանքների վրայ աւելանում էր և մի այլ հանգամանք. վանական դպրոցներում ժամանակագրութիւնները դասագրքերի տեղն էին բռնում, ուստի և անընդհատ իրենց մէջ էին առնում նորանոր բացատրութիւններ, անուններ և նոյն իսկ թարգմանութիւններ։

Ահա ուրեմն ի՛նչքան մեծ գործ է մի ժամանակագրութեան վերականգնելն ու հրատարակելը։

Նախ՝ պէտք է ստուգել, պատմական և ոճական ամեն միջոցով զտել ու վերականգնել նախընթաց հեղինակներից գրեթէ բառացի քաղուածները։

Երկրորդ՝ պէտք է վերականգնել նոյն իսկ հրատարակուող հեղինակի երկն իւր ամբողջ ծաւալով, զատել նախընթաց քաղուածքից և վերջից կցուած յաւելուածից։

Երրորդ՝ պէտք է մաքրել բնագիրը հետագայ թարգմանութիւններից, ընդմիջարկութիւններից և արտագրութեան ու լուսաբանողների խոշոր սխալներից։

Այս գործը կատարելու համար պէտք է մանրազնին քննութեամբ հաստատել աղբիւր-հեղինակների բնագիրն, պատմական անսայթաք գիտութիւնով քննել իրողութիւններն ու անունները, որ հնար լինի եկամուտն իսկականից զատել։ Մեծ հմտութիւն է պահանջւում իւրաքանչիւր դարու լեզուի, որ հնար լինի լեզուով հեղինակին ճանաչել և ընդմիջարկութիւններն ու թարգմանութիւնները որոշել։

Այսպիսի մի ծանր գործ դիւրանում է սակաւ ինչ այն մատենագրութիւնների վերաբերութեամբ, որոնց մէջ բնագիրների քննութիւնն աւարտուած է, ուր, այսպէս ասենք, իւրաքանչիւր հեղինակի գործ դրած Խ-երն իսկ համարուած են, ինչպէս են օրինակ յոյն և լատին մատենագրութիւնները։

Մեր գրականութեան վերաբերութեամբ խնդիրն աւելի է ծանրանում, որովհետև ցարդ մեր գրաբար մատենագրութեան և ոչ մի հատուկ երկի անգամ բնագիրը ստուգուած և զտուած է։ Եթէ չափազանցութիւն չհամարուի, մեր հինգերորդ դարու հրատարակուած մատենագրութեան $^1/_5$ մասը պէտք է այսօր յապաւել, սրբագրել և փոփոխել։

Այսպիսի հանգամանքներում Սամուէլ քահանայի ժամանակագրութեան հրատարակումն մի տարուան ընթացքում հրաշքի արդիւնք պիտի լինէր, եթէ կատարելութեան մերձենալ իսկ կամենար։

Սակայն եթէ կատարելութիւն պահանջելն անիրաւացի է, գոնէ հնարաւորը պահանջելն արդարութիւն է։

Կայ մի այլ հանգամանք ևս, որ Սամուէլի ժամանակագրութեան խնամքով հրատարակման պահանջն աւելի սաստկացնում է։ Երկու խօսքով յիշենք և այդ։

Մեր հին գրականութեան գլխաւոր պարծանքներից մին ևս այն է, որ նա միջնորդ է հանդիսանում յունական և այժմեան գիտութեան միջև, յոյն մատենագրութեան քանի մի նշանաւոր երկերի կորուստը փոխարինում է այսօր հայ մատենագրութիւնը։ Այս կորուստներից ծանրագոյնն է Եւսեբիոս Կեսարացու քրոնիկոնի կորուստը, որի բնագիրն այսօր փոխարինում է հայ թարգմանութիւնը։

Պատմական գիտութեան համար Եւսեբիոսը մի հարուստ շտեմարան է, որ պահուել է հայերէն լեզուով։ Եւրոպացիք մեզ շատ երախտապարտ են դրա համար և սկսեալ դարուս սկզբից՝ մշակելով վերականգնել են Կեսարացու գործը, որի վերջին հրատարակութիւնը *) մի գլուխ գործոց է պատմական և լեզուաբանական քննադատութեան։

Հայերէն Եւսեբիոսի ձեռագիրներից երկուսը միայն յայտնի են եւրոպացոց, առաջինը Վենետիկինը, որից եղած է և լատիներէն թարգմանութիւնը, երկրորդը Ս. Էջմիածնինը, որ ի հեռուստ միայն ծանօթ է։

Եթէ չեմ սխալւում այս երկու ձեռագիրներն ևս միևնոյնն են, որովհետև Վենետիկցոց ձեռագիրը մի պատճէն պիտի լինի Ս. Էջմիածնի ձեռագրի։ Եթէ իմ այս ենթադրութիւնը ճիշդ է, ուրեմն ցարդ մի հատիկ Եւսեբիոսի ձեռագիր միայն յայտնի է գիտնական աշխարհին։ Հայերէն թարգմանութեան թերութիւնների եթէ աւելացնենք և ձեռագրի աղաւաղութիւնները, հասկանալի կը լինի, թէ ի՛նչքան կարևոր է հայ բնագրի ճշգումը։

Այս զգացել են եւրոպացիք ևս, ուստի նրանք աւելի շուտով են ձեռնարկել Սամուէլ Անեցու գործի հրատարակութեան։ Յայտնի է՝ որ Սամուէլի ժամանակագրութիւնն այս առաջին անգամն է հայերէն հրատարակւում, մինչ լատիներէն հրատարակուել է 1818-ին և 1839-ին ֆրանսերէն Բրոսսէի ձեռքով 1876-ին, մի այլ անգամ ևս Պիւլռուէի ձեռքով։ Այս հրատարակութիւնների հիման վրայ Եւսեբի հայերէնը քանի մի տեղ ուղղագրուել է արդէն։

Սամուէլի հրատարակումն ուրեմն մեծ արժէք ունի և Եւսեբիոսի բնագրի համար։

Նոյնպիսի մեծ արժէք ունի Սամուէլն և մեր ազգային պատմագիրների վերաբերութեամբ, որովհետև նրա բնագրի մի մասը [illegible] և [illegible] արտագրութիւն են Խորենացուց և այլ պատմագիրներից։

Սամուէլ Անեցու բնագրի մի մասն այսպիսով ձեռագրի նշանակութիւն ունի թէ Եւսեբիոսի և թէ հայ պատմագրների համար։ Սամուէլ հրատարակողը խնամքով պիտի ստուգէ իւրաքանչիւր բառ, թուական և անուն, պիտի որոշէ ամեն անգամ հեղինակի սեպհականութիւնը։

Բայց այս ամէն յիշած աշխատանքներս արդէն երկրորդ կարգի աշխատանքներ են. իւրաքանչիւր հին հեղինակի երկ հրատարակողից ամենից առաջ պահանջւում է [illegible] բնագիրը վերականգնելու։

Այս պահանջները կատարելուց յետոյ միայն ազատ է հրատարակիչը լուսաբանութիւններով և ծանօթութիւններով մշակելու նիւթը։

Տեսնենք այս պահանջներին ի՛նչքան է համապատասխանում պ. Տէր-Միքելեանի հրատարակութիւնը։

Ն. Քարամեան։

(Կը շարունակուի)

*) Eusebii Chronicorum libri duo, edidit Alfred Schöne. Berolini apud Weidmannos. MDCCCL XV—LXVI.

կուչ է եկել ձեռներն ու ոտները և մի շաբթէն վրայ մեռել։

14, Ադամանց Թիւնու կնիկը, պատճառաւոր (չքի), երեք աղջկայ հետ (մինը խոտին, երկուսը ետնից) տանից դուրս է փախել, բայց կրակը առնելով փէշերին, ծնկնաշորերին, չորսին էլ բակում իրար ետնից խշիմի է բերել, այսինքն վառել թափոտել։

15, Դէրունց Առստամի աղջիկ երեխան մնացել է օրօրոցում և այրուել։

16, Առաքելի կնիկը, 17 տարեկան հարս, մնացել է իր տանը և մահացել։

17, Թ.ալունց Ներսէսի 12 տարեկան տղէն, հրդեհի տեսարանից վախեցած փախել է և սրտաճաք եղել ընկել։

18, Ջավահիրանց Պետրոսի հարսը 25 տարեկան, այրուել է իւր տղայ մանուկի հետ, հարսը հողի տակ եղած ժամանակ կիսայրեալ մանուկին կրակի մէջից գրկել փախցրել է տատը։ Բայց էլի մի քանի օրից յետոյ մահացել է։

19, Սողոմոնանց Մոսու կնիկը հրդեհը տեսած միջոցին վա՜յ է արել, տուն փախել, տեղն ու տեղը սրտաճաք եղել ու մեռել։

20, Դէրունց Վանիսանց աղջիկը 8 տարեկան փախել է տան քնդուկի մէջ մտել, որ ազատուի. այդտեղ էլ այրուել է։

Հրդեհի մաքառելու ժամանակ շատերի ձեռքերն ու դէմքերն է խանձուել. բայց մեռել են ընդամենը 28 հոգի՝ թէ մեծ թէ փոքր։

Վնասուածներից շատերին ինձ մօտ կանչելով խօսեցնում էի, թէ ո՞նց եղաւ որ իւր տանից ոքմին կրակի մէջ մնաց։ Հետաքրքիր է միքանիսների օրհասական կռիւը նկարագրել գէթ համառօտակի։

Մինն ասում է. երբ տեսայ որ ողջ գիւղը այրւում է, լաց ու շիւանը ամեն կողմ բռնել է, արդէն խոտի դէզս գըռանս վառւում է, չեմ կարողանում հանգցնեմ, օգնող էլ չկայ, ամենն էլ փախել են որ չայրուեն, ես էլ կնկանս ու երեխանցս դուրս բերի բակը, ասեցի սպասեն, ես մտայ տուն որ փողիս ղութին (արկղը) ծալքի տակէն հանեմ, վրայ չհասցրի։ Ձեռս մեկնեցի խալիչաներին, որոնց վրայ կնիկս արիւն քրտինք էր թափել մինչև գործել էր։ Մուխի ու կրակի միջով խալիչէքը խտտած դուրս բերելու վրայ էի, որ չէմքի մօտ մի խրլնգոց, մի երեխի նուոց լսեցի։ Մեռած եղբայրս մի հատիկ զաւակ ունէր, հէնց իմացայ նա է, կրակում այրւում է, ձեռիս բեռը խսկոյն թողի կրակի մէջ, թեքուեցի դէպի եղբօրս տան սրահը, տեսայ իմ սեպհական որդիքս են կրակի մէջ հոգևարք նուում։ Վա՜յ տուի գլխիս, ներս ընկայ կրակը, որդիքս արդէն մեռած էին, իսկ կինս որ դրսի կրակից ազատուելու համար որդկերանց կուռը բռնած այստեղ էր կուչուր արել, սարսափած դէպ ինձ մեկնեց իւր թևերը.—ամա՜ն, Թիւնի, կրակէն հանի, Թևից բռնած քաշեցի դուրս. կրակը այնքան շատ էր ու թանձր, որ մենք իրարից բաժանուեցինք ու գլխներս ազատելու համար փախանք այս ու այն կողմ։ Կրակը հանդարտուելուց յետոյ հաւատացած էի որ գոնէ կընկանս կենդանի կը գտնեմ, եկայ տեսայ հարևանի դռանը այրուած ընկած։ Կրակը կպել էր ոտաշորից։

Երկրորդը պատմում է. գեղի գլխին էի, լսեցի հարայ ընկաւ որ կրակ է ընկել ներքի կողմը. հարայի գնացած ժամանակ տեսնում էի այս ու այն տեղ խոտի դէզեր են վառւում։ Գնում եմ մեր տանըցոնց ասում որ կրակից հեռու լինեն, տուն մտնեն։ Գնում եմ ուրիշներին օգնելու, դեռ մի քանի րոպէ չանցկացած տեսնում եմ իմ դէզն էլ է այրւում։ Ցեռ եմ պառնում, մինչև հասնելս գոմս էլ է վառւում, ու ծուխն ու մուխը սրահը լցնում։ Ուզում եմ տուն մտնեմ, ամեն կողմից բոցը պատած է, ոչ մարդ կայ, ոչ հարևան։ Կանչում եմ, լաց եմ լինում, խող չկայ. մնում եմ ձեռներս խաչած կանգնած։ Խոտս, չարդախս որ այրւում վերջանում են, էլ ճախի ու փէտի ծուխին չեմ նայում, ինձ գցում եմ վառուած կոճերի տակով սրահը, այնտեղից էլ տուն. ծխով լիքն է. Մի կերպ գտնում եմ որդիներիցս երկուսին ուշաթափուած վեր ընկած. խտտում եմ երկուսին էլ կրակի միջով փախցնում բակից էլ դէնը մի ապահով տեղ դնում։ Շտապում եմ տուն ու ծխի մէջ ձեռներս անելով կնկանս գտնում, նա էլ է ուշաթափուած ընկած։ Այդ րոպէին ոտիս թելը կտրուել էր, ինչքան էլ աշխատեցի շալակեմ, չկարողացայ։ Որքան սարսափելուց իմ ոյժը կորել էր, այնքան էլ նա ծանրացել էր արճճի պէս։ Ճարս կըտրուած մի կռնից բռնեցի ու թրևելով դուրս բերի ինչպէս գիակ։ Երբ երեխանցս մօտ էի տարել քաշ տալով, այդտեղ նոր երկու տղայ երևացին։ Նրանք իմ կնկանս վերցրին տարան, ես նորից դարձայ որ գնամ ամենափոքր որդուս ծխի մէջ որոնեմ։

Դէս ընկնում դէն, չի գտնում, գալիս է կնոջ մօտ, որ քիչ ուշքի եկած է լինում։ Կինը չի իմանում, որ իւր երեխան քեռու տուն վազելով մնում է նրանց փլուող սրահի տակ։ Իսկ երեխի հայրը երբ կրկին տուն է մտնում, շօշափում է մի փափուկ բան, կռանում է տեսնում կինարմատ։ Խտտում է մի կերպ դուրս բերում, տեսնում է իւր պսակած աղջիկը։

Խեղճը փախած է եղել մօր մօտ, որ ազատուի, բայց նրա գալը ոչ մայրն է իմանմլիս եղել, ոչ հայրը։ Ծխի մէջ երկար ժամանակ ուշաթափուած լինելով, այլ ևս չի կենդանանում։ 15—16 տարեկան է լինում այդ հարսը։

Երրորդ աւելի սրտաճմլիկ պատմութիւն.

Տան տղամարդը դաշտումն է. կինը չղի է և հինգ երեխայի տէր, որոնց ամենամեծը 12 տարեկան։ Տեսնում է կըրակը հարևանների տները, գոմերը կործանելով գալիս է դէպ իւր տուն, որքան կարողանում է տան միջից կողէնք բան դուրս է կրում։ Աղքատի աչքին ամենաթանգը իւր տան մէջն է, որ հազար նեղութիւնով գլուխ է բերել։ Ցղի կինը նկատելով կրակը իրեն ժամանակ չի տալիս տան սարքը դուրս տալու, երեխանց խնդրում է որ դուրս գան։ Երեխայքը առանց մօր չեն համարձակւում բակը ելնել—որովհետև կրակը պատած է լինում։ Մայրը կսկծալով գրկում է երեխանց մէկ-մէկ երեխանց տանից հանում, բայց որ դրանք չայրուին, որին խտտած որին շալակած, որի թևից բռնած վազէ վազ շտապում է բարեկամ քահանայի տուն, որ միւս բլրի կողի վրայ է շինած։

Այդտեղ հասնելուն պէս երկունքով բռնւում է. վերադառնալ չի կարողանում, սկսում է լալ—գոչել—«ըըըըոցիս խօխան մնա՜ց կրակում. վա՜յ Աստուծ, դեարգեաչիդ մատաղ ինիմ. ղիմիշ մ'անիլ իրուի. մեղք ա»։

Անգամ ուզում է գնալ, կամ կրակի մէջ ընկնի կամ երեխան հանի։ Մինչև բարեկամները կը հանգստացնէին, մարդը դաշտից կրակի տեղն է հասնում ու գոռալով՝ «խօխէք» կանչում և ուզում է իւր տան վրայ վազի։ Նրան հասկացնում են, որ կինն ու երեխաները ազատուած են, բացի մէկից։ Այդ մէկը քնած է լինում ճօճում, իսկ ճօճը կապած տան երկու սիւներից։ Մանուկի հայրը ճչալով, մղկտալով վազում է իւր բակը. տեսնում դռան թթի ծառը վառուած, ճախ, փայտ, խոտ կառ. ընկած, հարիւր արշին հեռու կանգնողին վառում է ինչ թէ մօտեցողին։ Դէս է ընկնում դէն բացի խանձուելուց, մրկելուց օգուտ չի ստանում։ Ճարահատած մնում է առժամ ծնկները ծեծելիս և գարշուրելի հրդեհի երեսն ի վեր նայելիս։ Տեսնելով, որ դռնովը հնար չկայ տուն մտնելու, վճռում է կտրով մտնել, իսկոյն բարձրանում է կտուրը, հողը քանդելով մի քանի տախտակ վերցնում։ Այդ ծակով տեսնում է, որ դեռ ճօճը անվնաս կայ, և երեխան էլ երեսը ծածկած։ Տան մի կողմը վառուելիս է լինում։ Կախուելով դէպի ներսը ոտը դնում է պատի ռափի (դարակի) վրայ, որ ներքև իջնի, անսպասելի կերպով մի խիստ ճայթիւն է լսւում, որին հետևում է ամբողջ տանիքի փլըչկուելը և բոցավառուելը։ Դարակի վրայ մի փունտի չափ վառօդ է դրած եղել իբրև որսկան մարդ, հէնց այդ վառօդն է, որ ընկնելով կրակի մէջ բռնկել է ու տանիքը խորտակել։ Այդ մարդը իւր անձը վտանգի մէջ տեսնելով բոցերի միջից դուրս է նետւում. Մի քիչ միջոց սիրտը չի համբերում, կրկին իջնում է իւր փլուած տունը և նկատում է, որ այն սիւները, որոնցից կապած է ճօճը, վերևի մասից հուրհրատում են, կոճերը քիչ են մնում որ թափուին երեխայի ճօճի վրայ։ Մի քանի րոպէ ևս, իւր աչքի առաջ իւր սիրական որդին, իւր կեանքի կտորը պիտի խորովուի անպաշտպան։ Արդէն տեսնում է, որ ճօճի թոկերից մինն անգամ այրուել. երեխան միւս կողմի վրայ թեքուել է։ Հօր և որդու ճօճի մէջ տեղ կրակն է պսպղում, ուժեղ ճարճատիւններ հանում։ Տեսնելով, որ կրակի ձեռքից ազատելը դժուար է, եթէ մօտենալ ճօճին մինչև կապերը արձակելը, միլլ անելը, իւր գըլխին պէտք է թափուին կոճերն ու հողը, աւելի լաւ է համարում իւր որդուն հողով ծածկուած տեսնել քան այրուած։

Մի երկար փայտով տանիքի հողը շարժելով թափում է ճօճում պառկած որդու վրայ. և աչքերը սրբելով հեռանում կրակի մօտից. խանձուած երեսով և փշտռտած ձեռներով

Այդ երեկոյ կինն ազատւում է և տըղայ զաւակ ծնում։ Իսկ առաւօտը երբ բարեկամները իւր զաւակին որոնելիս են լինում այլ տեղեր, հայրը մատով ցոյց է տալիս թէ քանդեցէք մեծ սիւնի կողքը։ Փանդում են և մանուկի դիակը հանում։

—Հանց էդ ի օզում վեր խօխիս աչկաւ տենամ, պտանեմ, հողին պահ տալիս ըրեսան պաչիմ, իրան մխիթարելով, ասում էր մանուկի հայրը։

Աւելի սրտամորմոք դէպքեր են եղել. բայց նրանք յետոյ

Քամալեան Ս.

(Կը շարունակուի)։

1893 թ. 24 նոյեմբ.
Ղալագէ։

Дозволено цензурою. Тифлисъ, 2 Декабря 1893 года. Типографія М. Мартиросянца, по Орбел. пер. № 1—3

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

—

Ներքին գործոց նախարար Ռէյնալը, ծագումով հրեայ, 39 տարեկան, առաջին անգամ քաղաքական շրջանում երեւեցաւ իբրեւ երեսփոխան հասարակապետական ձախ կողմի։ Երբ 1881 թ. 14-ին նոյեմբերի Գամբետտան նախարարապետ դարձաւ, Ռէյնալը հասարակական շինութեանց նախարար կարգուեցաւ։ Նոյն պաշտօնը վարեց նա 1883 թ. Ժիւլ Ֆերրի կազմած նախարարութեան մէջ։ Ռէյնալը շատ անգամ մեղադրուեցաւ կաշառակերութեան մէջ, բայց դատաստանը միշտ արդարացնում էր նրան։

Ազգային լուսաւորութեան նախարար Սպիւլլէրը յայտնի է իբրեւ Գամբետտայի բարեկամ, որի հետ նա մտերմացաւ փաստաբանական ասպարէզում և գործում էր երկրորդ կայսրութեան և ապա հանրապետութեան ժամանակ։ Սպիւլլէր, որ այժմ արդէն 58 տարեկան է, ազգային լուսաւորութեան նախարար էր 1887-ին Ռուվիէի նախարարապետութեան ժամանակ և արտաքին գործոց պաշտօնեայ էր Տիրարի նախարարապետութեան ժամանակ 1889։

Երկրագործութեան նախարար Վիժէն ծնաւ 1843 թ. բստ կրթութեան բժշկութեան դոկտոր է։ Երեսփոխանական ժողովում աչքի ընկաւ տնտեսական հարցերի մասին վիճաբանութեանց ժամանակ։ 1883 թ. ժարտին Ռիբօյի նախարարութեան վերակազմութեան ժամանակ նրան առաջարկուեցաւ երկրագործութեան նախարարի պաշտօնը, որ և մինչև ցայժմ վարում է։

Արդարադատութեան նախարար Դիւբոսկը առաջին անգամն է նախարարի պաշտօն վարում։ 1879-ին նա արդարադատութեան նախարարի գլխանի կառավարիչն էր, իսկ 1880-ից սկսած երեսփոխան է։ Պատերազմի ժամանակ նա Օրն-դեպարտամենտի կառավարիչ էր։

Առևտրի նախարար Մարտին առաջին անգամն է վարչական պաշտօն վարում։ Իբրև անդամ երեսփոխական յանձնաժողովի նա եռանդով մասնակցում էր մաքսային տարիֆի մշակութեան։

Հասարակական շինուածոց նախարար Ժոննարը, ներկայ նախարարական խմբի մէջ ամենից երիտասարդն է, նա 36 տարեկան է։ Նա պաշտօն է վարել Ալժիրի վառավարութեան և ապա Սենայի վարչութեան խորհրդի մէջ։ 1889 թուականից Ժոննարը Պա-դէ-Կալէի երեսփոխան է։

——

ՖՐԱՆՍԻԱ.—Անիշխանականների մի անօրինակ եղեռնագործութիւն այս երկու օրս տեղի ունեցաւ նաև Փարիզում. պատգամաւորների ժողովում, նիստի ժամանակ, մի չարագործ պայթուցիկ ռումբ է ձգել դահլիճը, ուր պայթելով պատգամաւորներից շատերին վիրաւորել է։ Դեռ Բարսելոնի թատրոնի դէպքը չմոռացուած, հասարակաց կարծիքը դեռ չխաղաղած՝ ահա երկրորդ սոսկալի ոճիր է գործւում կրկին մի բազմամարդ ժողովում։ Ինչ ասել կ'ուզէ որ ամբողջ Եւրոպան, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը վրդովուած է այս վայրագ ոճիրների պատճառով և ամենուրեք մի ընդհանուր ձայն է լսւում, այն է ամենախիստ վարչական ու օրէնսդրական միջոցներով անիշխանականների կործանիչ ձգտումների առաջըն առնել և խաղաղ հասարակութիւնը պաշտպանել վերը յիշուածների նման պատահարներից։

Ֆրանսիական կառավարութիւնն արդէն իսկ ամենաեռանդուն կերպով սկսել է քննել պատգամաւորների ժողովում պատահած դէպքը. և ռումբը ձգողն արդէն կալանաւորուած է։ Շատ անիշխանականների մօտ անմիջապէս խուզարկութիւններ են եղած և կասկածելի անձինք ձերբակալուած են։ Բայց դորանից նախարարութիւնն արդէն բաւական օրէնք է մշակել, որ պիտի առաջարկէր երէկ կամ այսօր պատգամաւորների ժողովին ի հաստատութիւն։

Այդ օրէնքով կառավարութեանն աւելի իրաւունքներ պիտի տրուին վարչական եղանակով արտաքսելու անիշխանականներին կամ միջոցներ գործ դնելու նոցա դէմ։

Բնական պէտք է համարել և այն, որ այժմ անիշխանականների ոճրագործութեանց առաջն առնելը դառնայ մի միջազգային խնդիր. անշուշտ բոլոր տէրութիւններն էլ պիտի աշխատեն արմատախիլ անել այդ չարիքը, որ այսօր այնպէս տարածուած է ամբողջ Եւրոպայում։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՏՈՒՂԱԿ ԼՈՒՐԵՐԸ

Նոյեմբերի 30-ից

ՓԱՐԻԶ.—Պատգամաւորների ժողովն ընդունեց կառավարութեան օրինագիծը, որով 5—ամեայ բանտարկութեան են դատապարտւում կողոպտելու, հրձինգ անելու և սպանութեան փորձեր անելու հրաւէրները, այլ և այդ արարքների գովաբանութիւնները։ Օրինագիծը թոյլ է տալիս նախնական ձերբակալութիւն և ինչքի գրաւելը։ Ֆերակոյտը ծափահարեց Պեռիէին այս օրէնքը կարդալիս։ Մեծ զգուշութեան միջոցներ են ձեռք առնուած հասարակական շինութեանց և թատրոնների պաշտպանութեան համար։ Մօտ 30 օտարազգի անիշխանական պիտի արտաքսուին։ Հաղորդում են որ ձերբակալուած է ոմն Մարշալ, Վայեանի սիրուհին։

ՀՌՈՄ.—Պալերմոյի գաւառի Ջարդինիելլօ համայնքում մեծ անկարգութիւններ տեղի ունեցան քաղաքային վարչութեան դէմ։ Ապստամբներից 8 հոգի սպանուած է և 14-ը վիրաւորուած։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Եկող տարուանից նոր տարիֆ է սահմանւում ապրանքների փոխադրութեան համար Անդրկովկասի երկաթուղու կայարաններից մինչև Ռուսաստանի բոլոր կայարանները։

Դեկտեմբերի 1-ից.

ՓԱՐԻԶ.—Մամուլի վերաբերեալ օրէնքի փոփոխութեան նախագիծը ծերակոյտն ընդունեց միաձայն առանց վիճաբանութիւնների։

ԲԱՐՍԵԼՈՆԱ.—Տրաֆալգար փողոցի մի տան մէջ գտնուած է 4 ուժանանակի ռումբ։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Գ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10½—11½ ժ. ներքին, երեխայոց և կանանց հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, և քթի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Վ. ՉԷՊՈՒՐԿՈՎՍԿԻ — 5—6 ժ. երեխայոց և կրծքի ց., քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի.

Ա. Փ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ Նաւասարդեան։

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

(Մայիսի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը)

—

Թ ի ֆ լ ի զ ի ց՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վ լ ա դ ի կ ա վ կ ա զ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 6 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 10 ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վ լ ա դ ի կ ա վ կ ա զ ի ց՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թ ի ֆ լ ի զ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9 ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5 ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը 8½ ժամին երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջեւ.

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եալտայի և Սևաստոպոլի վրայով։

Երկուշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

Կ. Պօլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին։

Բաթում է դառնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սևաստոպոլի վրայով։

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՍԻՐԱՀԱՐԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ
վօդըւիլ մէկ արարուածով
հեղինակութիւն
Բարսեղ Քամալեանի։
Վաճառւում է բացառապէս հեղինակի գրավաճառանոցում։
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
(5—1)

Լոյս տեսաւ
ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ
ԸՆՏԻՐ
ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Խմբագ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆԻ

2 հատոր, հեղինակի 2 պատկերով, ինքնագրով, կենսագրական նկարագրով և Ն.-Նախիջևանի բառգրքով,

Հատոր Ա. Ոտանաւորներ։

Հատոր Բ. Արձակ գրուածքներ։

Հրատարակեց ՎԱՌՎԱՌԷ ՔԱՆԱՆԵԱՆ յօգուտ Ռ. Պատկանեանի ընտանեաց։

Գինը 2 հատորի — **4** ռուբլի։

Դիմելու է՝ Մ ո ս կ ո ւ ա. (Պահեստ հրատարակչութեան) Լազարեան ճեմարան, հրատարակչին։

Պ ե տ ե ր բ ո ւ ր գ. Մեծ. պ. Գասպար Եազըբեանին։

Թ ի ֆ լ ի զ. Մեծ. պ. Փիլիպպոս Վարդանեանին։

Գ ա ն ձ ա կ։ Բժիշկ Մնացական Թեմուրեանին։

Ն.-Ն ա խ ի ջ և ա ն. Մեծ. պ. Խաչատուր Չալխուշեանին։

Շ ո ւ շ ի. Մեծ. պ. Լևոն Սարգըսեանցին։ (6—1)

Կենդրոնական գրավաճառանոցը
ԹԻՖԼԻԶՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ

—

ԳԻԼԵՆՔԷ, Կինն իբրև ամուսին, ֆիզիքական և բարոյական առողջաբանութիւն ամուսնութեան, Կ. Պօլ. 1893 թ. գ. 1 25
ճան. ծախ. 25 կ.

ԳԱԼԷՄՔԵՐԵԱՆ, Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը, Վիեննայ 1893. կազմ. 1 40
ճան. ծախ. 25 կ.

ԳՕԳՕԼ, Վաղեմի կալուածատէրներ, Ս.-Պետ 1893. գ. —30
ճան. ծախ. 15 կ.

ԸՆՏԻՐ ՀԱՑԿԱԶՈՒՆՔ կամ Նուէր առ հայկակ. պատկերազ. գ. 2 —
ճան. ծախ. 40 կ.

ԼԷՕ, Ուսուցչութիւն, վէպ, բ. 1893 գ. —40
ճան. ծախ. 20 կ.

ՄՈՒՐԱՏԵԱՆ, Մելք. եպ. Հովուական Աստուած, Կ. Պօլ. 1892. 1 25
ճան. ծախ. 30 կ.

ՄԱՏԻՆԵԱՆ, Գր. ք. Համասփիւռ (հէքեաթ), Տփ. 1894 գ. — 5

ՇԱՀԱԶԻԶԵԱՆ, Ամբ. Յօբելեանի տարեգարձ, Մոս.1893. գ. 1 50
ճան. ծախ. 25 կ.

ՊԵՌՔԶՕՆ, Սրուեստ հարստանալոյ և հարստութիւնը պահելոյ, Կ. Պօլ. 1892 թ. գ. —40
ճան. ծախ. 15 կ.

ՍՏ. ՓԵԼԻՊՍ, Գթութեան քոյր, Բ. 1893 թ. գ. —15
ճան. ծախ. 11 կ.

ՈՒՂԵՑՈՅՑ ԿԱՆԱՆՑ և ՕՐԻՈՐԴԱՑ ի կեանս առտնին և ընկերական գ. 1 25
ճան. ծախ. 25 կ. (3—1)

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
ՍԱՐԱՏՈՎԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ
ԲԷՆԴԷՐ եւ ՍՏԵՊԱՆՈՎԻ
Առևտրական տուն

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

տաք շալեր բումազէյ և բումազէյեց կարած տղամարդկանց շապիկներ, խանութում գտնւում է նոյնպէս բաւականաչափ սարպինկայի գուլպաներ, գլխի փաթեթներ, թաշկինակներ և տղամարդու գունաւոր շապիկներ բազմատեսակ և բազմերանգ սարպինկաներից կարած։

Թիֆլիզ, Սօլօլակսկի փողոց։ (30—13)

Թիֆլիզի Կենդրոնական և Կովկասի
ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է
ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

«Ալմաստ» վէպը Բարձր-Հայոց կեանքից. . . 2 ռուբ.

«Խաչ-Կապարեթ» վէպը Հայ-կաթոլիկների կեանքից . . . 1 »

«Ձուշան» ողբերգութիւն Թուրքահայերի կեանքից. . . 1 »

«Սարրաֆ» ողբերգութիւն Թիւրքահայերի պատմ. կեանքից. . — 30 կ.

(62) (50—41)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ց1-ն Դեկտեմբերի 1893 թ.

ՊԱՀԱՆՋՔ			
I Անդամներ 1094	4,464,950—		
Անդամավճարները հանած	892,600	3,572,350	—
II Դրամարկղ		58,902	32
III Ընթացիկ հաշիւ Պետ. բանկ. բ. . . .		61,550	03
IV Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ .		2,482,916	57
V Զեղճ. տոկ. թղ. կտրօնների և այլն . . .		21,832	99
VI Զեղճումն սօլօ—մուրհակների գրաւականով			
ա) պետութեան ոչ ապահովեալ արժեթղթերի	330,437—		
բ) ապրանքների	20,716—		
գ) անշարժ կալուածքների . . .	168,120—	519,273	—
VII Փոխատուութիւն գրաւականով			
ա) Պետութեան ապահ. տոկ. թղ. . . .	599,380—		
բ) » ոչ » . . .	101,910—		
գ) ապրանքների	— —		
դ) Ոսկւոյ և արծաթի		701,290	—
VIII Առանձնական ընթացիկ հաշիւներ . . .		1,204,007	41
IX Պահեստի դրամագլխին պատկ. տոկոս. թղթեր . . .		120,779	10
X Ընկերութեան պատկանեալ արժեթղթեր . . .		48,948	97
XI Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	1,438,779 67		
Ընկերութեան հաշիւը (Nostro) . .	10,346,491 66	12,285,271	33
XII Բողոքուած մուրհակներ		22,061	83
XIII Պայմանաժամ. անցուցած փոխատու. . . .		5,050	—
XIV Մուրհակի և դրոշմակիր թղթեր. . . .		1,920	05
XV Ընթացիկ ծախսեր		45,712	84
XVI Յետ ստացուելիք ծախսեր . . .		11,720	18
XVII Կահ կարասիք և սկզբն. ծախսեր . . .		3,525	73
XVIII Ընկերութեան վրայ մնացած անշարժ կալք. . .		29,272	30
XVIII Փոխանցիկ գումարներ		36,920	92
Ր. Ա.		21,233,355	57

ՊԱՐՏՔ			
I Ապահովութեան դրամագլուխ		3,572,250	—
II Հիմնական դրամագլուխ		892,600	—
III Պահեստի դրամագլուխ		121,699	30
IV Օժանդակութեան դրամագլուխ ծառայողների համար . . .		7,523	05
V Դրամական աւանդներ՝			
ա) Ընթացիկ հաշուով հասարակ . . .	422,243 60		
բ) » » պայմանաւոր . .	340,059 04		
2) Պայմանաժամով՝			
ա) Ընկերութեան անդամներից . . .	241,251 —		
բ) Օտար անձինքներից	1,597,518 96		
3) ցպահանջ			
ա. Ընկերութեան անդամներից . . .	9,607 —		
օտար անձինքներից	468,292 85	3,078,972	15
VI Պետ. բանկ. վերջ. մուրհակներ		399,891	43
VII Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բան. մուրհակներով . .		— —	—
արժեթղթերով . .		— —	—
VIII Ընկերութ. փոխադրութեամբ ստացած հասանելի գումարներ .		341,595	11
IX Թղթակիցներ			
ա) Նոցա հաշիւը (Loro)	1,147,818 02		
բ) Ընկերութեան հաշիւը (Nostro) . .	11,300,024 06	12,447,842	08
X Չը վճարուած դիվիդենտ		15,826	08
XI Չը վճարուած տոկոսներ աւանդների և ընթաց. հաշիւների .		79,148	09
XII Փոխանցիկ գումարներ		16,889	28
XIII Հանումներ ըստ 16-րդ յօդ. տրամադր. . . .		27,175	28
XIV Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ . . .		228,513	60
XV 5% պետական հարկ դրամագլխներից . . .		2,349	82
XVI Զուտ արդիւնք			—
Ր. Ա.		21,233,355	57